



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2020 թվականի թիվ 302-Ա

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՔՊ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՄԱԿԱՐԳ
ԲՈԼՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված, ՀՀ Տավուշի մարզի տարածքում հաշվառված ապաստարանների նորմատիվ պահանջներին համապատասխանության ուսումնասիրության և դրանց քանակի հստակեցման, ՔՊ պլանների ճշգրտման կառավարման մարմինների և ՔՊ կազմավորումների պատրաստականության բերման հակառակորդի խոցման միջոցներից բնակչության և տնտեսության օբյեկտների պաշտպանության միջոցառումների արդյունավետությունը բաժրացնելու նպատակով՝

որոշում եմ.

1. Մարզի քաղպաշտպանական կառույցների ինժեներական նորմերին համապատասխանելիությունը և առկա իրավիճակը ստուգելու, թերություններն ու կարիքները և դրանց լուծման տարբերակները բացահայտելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ն. Գրիգորյան - ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական,

Կազմակերպչական հարցերով պատասխանատու՝

Ա. Գևորգյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար,

Անդամներ՝

Ա. Գալստյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ,

Գ. Մատինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ,

Վ. Աբազյան - ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ բնակչության պաշտպանության

- բաժնի պետ, փ/ճ փոխգնդապետ,
- Ռ. Պետրոսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի մասնագետ,
 - Ա. Վանեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ,
 - Վ.Խառատյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալականապահովության վարչության ավագ մասնագետ,
 - Ժ. Խաչատրյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վաչության ավագ մասնագետ:
2. Որոշման կատարման համար սահմանել 10 օր և կատարման պատասխանատու նշանակել Նիկոլայ Գրիգորյանին:

ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՅԿ ՉՈՐԱՆՅԱՆ

X



19 օգոստոսի 2020թ.

ք.հջևան